# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
# 24.03.2021թ. N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/18-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «13» 12. 2021թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Միրզախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «էքսպրես Շին» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ձ. Եղիազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, այսուհետ՝ «Կողմեր», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հիմք ընդունելով 24.03.2021թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/18-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետով՝ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Պայմանագրի գինը ավելացնել 125 200 (մեկ հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարով.

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3.1. Պայմանագրի գինը կազմում է 9 515 200 (ինը միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.3 Հաստատել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը նոր N Հավելված 1/1 խմբագրությամբ և ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիրը:

1.4 Հաստատել Սույն համաձայնագրի թիվ 2.1 հավելվածով վճարման ժամանակացույցը և ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի թիվ 2 Հավելվածը:

2. Թիվ 1/1 և 2.1 Հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի բաղկացուցիչ մասը:

3. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:

4. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և հանդիսանում է Պայմանագրի բաղկացուցիչ մասը:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Արտակարգ իրավիճակների նախարարություն | «էքսպրես Շին» ՍՊԸ |
| ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8 | Արմավիրի մ, գ. Բամբակաշատ 14/1, 3 տուն |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011001352 | Հ/Հ 1660015584350110 |
| ՀՎՀՀ 00153247 | ՀՎՀՀ 04423377 |
| Գլխավոր քարտուղար՝ | |
| _______________ Լ. Միրզախանյան | _______________ Ձ. Եղիազարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Հավելված N 1/1*
*«24» մարտի 2021թ. կնքված*
*ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/18-1 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | *44163300/1* | *Ռեզինեփողրակներ / Հրշեջ փողրակ 51* | Mobiak S.A | Տես Հավելված 1.1 | մետր | *3 130* | *9 515 200* | *3 040* | Ք.Երևան, Դավիթաշենի 4, Ա.Միկոյան 109/8 | *3 000* | 2021թ 2-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | | *40* | Մինչև 2021թ. դեկտեմբերի 25 |

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**ԳՆՈՐԴ**

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

________________ Լ. Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էքսպրես Շին» ՍՊԸ
Արմավիրի մ, գ. Բամբակաշատ 14/1, 3 տուն
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660015584350110
ՀՎՀՀ 04423377

________________ Հ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2.1*
*«24» մարտի 2021թ. կնքված*
*ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/18-1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | *44163300/1* | *Ռետինեփողրակներ / Հրշեջ փողրակ 51* | - | - | - | 2817000 | 2817000 | 2817000 | 5164500 | 5164500 | 5164500 | 9390000 | 9390000 | 9 515 200 | 9 515 200 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_______________ Լ. Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էքսպրես Շին» ՍՊԸ
Արմավիրի մ, գ. Բամբակաշատ 14/1, 3 տուն
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660015584350110
ՀՎՀՀ 04423377

_______________ Հ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ